

ԱՆՆԱ ԱՐԵՎԱՏՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԵՎՍ ՄԻ ԱՆԳԱՄ ՍՏԵՓԱՆՈՍ ՍՑՈՒՆԵՑՈՒ ԱՆՁԻ ԴԱՐՅԻ ՇՈՒՐՉ

Անցյալ դարի 70-ական թթ. ակզբից հայ երաժշտական միջնադարագիտության մեջ ծայր է առել մի տեսակետ կամ ավելի ճիշտ՝ վարկած, որի համաձայն եղել են Ստեփանոս Սյունեցի անունով երկու անձեր՝ Ստեփանոս Սյունեցի Ա., իբրև թե V դ. ապրած, և Ստեփանոս Սյունեցի Բ., VIII դ. բոլորին հայտնի փիլիսոփա, թարգմանիչ, քերական, շարականագիր և երաժշտության տեսաբան: Վարկածի հեղինակն էր վաստակաշատ երաժշտագիտ Նիկողոս Թամիմիզյանը, որն այդ հարցին նվիրված ծավալու հոդված հրապարակեց¹, հետագա իր բոլոր աշխատություններում², Հայկական Սովետական Հանրագիտարանում³ և այլուր⁴ ևս տարածելով այդ վարկածը:

Սակայն ի մոտո ծանրթանալով և ուսումնասիրելով վերոնշյալ հարցը, մենք հաճակել ենք այլ տեսակետի, որը հայագիտության մեջ թեև նոր չէ, բայց, կարծես, մոռացության էր մատնված: Ուստի անհրաժեշտություն ծագեց ներկայացնելու Ստեփանոս Սյունեցու՝ հայ հոգևոր երգարվեստի ու նրա տեսության մեջ կարևոր ներդրումն ու վաստակը՝ ներառնելով ինչպես հիմ, արդեն արտահայտված կարծիքներ, այնպես է՝ լրացուցիչ նոր տվյալներ:

Մեր բոլոր միջնադարյան մատենագիրներն ու պատմիները գրեթե միակարծիք են Ստեփանոս Սյունեցում՝ իբրև երաժշտի վերաբերող իրենց հաղորդած տեղեկությունների մեջ: Այսպես, եթե հետևենք ժամանակագրական կարգին, ապա Ստեփանոս Սյունեցու մասին վկայող ամենավաղ կարևոր տեղեկությունները առկա են հենց իր իսկ վարքում, որն, ինչպես հայտնի է, ունեցել է երեք խմբագրություն և ի մի քերվել Մխիթար Այրիվանեցու ձեռքով: Ահա թե ինչ ձևով են այդ տեղեկությունները հասել մեզ. «... արար եւ շարականս աւագ օրհնութիւններն զէ: Ճայնին եւ վաղին մնաց, որ տէր Ներսէս ասաց ի նոյն ոճ բանից»⁵:

Տարբեր մատենագրական աղբյուրների հաղորդած տեղեկություններից առանձնանաւմ է Ստեփանոս Օրբելյանի հաղորդածը. «Բաժանեաց եւ զույն ձայնս եւ կարգեաց, շարեաց զթարութեամ օրհնութիւնս, երգեաց եւ կցուրդս քաղցրահամս, յարմարեաց եւ ստո-

¹ Տե՛ս Ն. Թահմիզյան, Սյունեցի երկու համանուն երաժշգիններ և Հարության Ավագ Օրհնությունները, «Էջմիածին», 1973, թիվ 2, էջ 29-43:

² H. K. Տաղմազյան, Теория музыки в древней Армении, Ереван, 1977, сс. 50, 52, 81-87, 95, 105, 141, 142, 165-167; его же, Шаракан, Из армянской поэзии V-XV вв., Ереван, 1990, сс. 6, 42-46, 205-206; см. также С. Золян, О поэтике шараканов (заметки переводчика), там же, с. 174.

³ Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, էջ 137-138:

⁴ Ն. Թահմիզյան, Ոսկեփորիկ, Ե., 1980, Խոյնի, Ոսկեփորիկ, Լու-Անգլիս, 1995:

⁵ Գ. Յովսենինան, Մխիթար Այրիվաննեցի, Երուսաղէմ, 1931, էջ 20:

ղոգին թիմաց լոյժ խորհրդաւոր, եւ զպամոցն, որ զաղութացն երգի»⁶: Ուշագրավ է նաև միջնադարյան «Ճայնից» մեկնություններից մեկի խորագիրը: «Բարսոյի Կեսարեցւոյն ասացեալ յաղագ Ճայնից, որ թարգմանեալ է Ստեփանոսի Սիմեոնց Եպիսկոպոսի, զի նա եղեւ երաժիշտ հմտու ամենայն Ճայնից եւ բաժանեաց զճայնն ի մասուն եւ եղ զյարուկայք ի Վերայ Ճայնին»⁷:

Հայ Վերը թերված մատենագրական աղբյուրների՝ ակնհայտ է դառնում Ստեփանոս Սյունեցու հմկապական դերը, որի հետ է կապված Ութձայն համակարգի բարեկարգումը («բաժանեաց եւ զութն Ճայնու...»), եկեղեցական ստուներին Ավիրված 8-9 երգերից բաղկացած բյուզանդական կանոնի ժամը Աերմուծումը («...կարգեաց շարեաց զթարութեան օրհմութիւնս...»), ինչպես նաև խազային նշանների հայմանական կիրառության գործընթացը («... եւ եղ զյարուկայք ի Վերայ Ճայնին...»):

Կանոնի ժամը Աերմուծման հայմանական փուլը կապված է Ստ. Սյունեցու կողմից Հարության Ավագ օրհմությունների՝ ուժ Ճայնեղամակներով երգվող ուժ մեծ շարքերի ստեղծման հետ, որոնք երգվում են Նոր Կիրակից միմնև Հոգեգալուուս՝ հաջորդաբար օրը մեկական կարգ⁸: Տվյալ երգաշարքերը որոշ էական հատկություններով սկզբունքորեն տարրերվում են ոչ միայն պարզագույն արխակի կցուրդներից, այլև ընդհանրապես շարականների ճաշող մեծամասնությունից: Բյուզանդական պաշտոնագրության մեջ դրանց համապատասխանում են janastashmevnai կոչվող օրհմերգերը, որ նույնպես ստեղծվել են VII-VIII դարերում):

Հարության Ավագ օրհմությունները կազմող ուժ շարքերից յուրաքանչյուրը բաղկացած է Հին Կտորակարանի 10 մարգարեական օրհմությունների հիմնա Վրա կաղապարված մասերից: Օրհմություններ, որ հնուց ի Վեր Հայ Եկեղեցին Աերմուծել էր Ժամերգության մեջ: Մարգարեական օրհմությունները ժամանակին կցվել են սահմոսականներին և ունեցել վառ արտահայտված երգային զարդողորուն մեղեղային մկարագիր, սակայն նետագայում չեն պահպանվել ժամասացության մեջ.

1. Օրհմեցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ (Ծից 15)
2. Նալեցարուք, երկինք, եւ խոսեցաց, եւ լուիցէ երկիր զպատգամն բերանոյ իմոյ (Բ Օր. ԼԲ 121)
3. Զի հուր բորբռեցա ի բարկութեամէ իմսէ (Բ Օր. ԼԲ 22-28)
4. Մաներո՛ք եւ տեսեք, զի ես եմ, եւ ոչ գոյ Աստուած բաց յիմէն (Բ Օր. ԼԲ 39-43)
5. Հաստատեցա սիրտ իմ ի Տէր, եւ բարձրացաւ եղջիր իմ Աստուած Փրկիչ իմ (Ա Թագ. Գ 1-10)
6. Ի գիշերաց կամիսէ հոգի իմ առաօտ առնել առ Քեզ, Աստուած (Ես. ԻԶ 9)
7. Եւ ասացի ի վերանալ յիմէն ատուց իմոց, թէ գնացից ես ի դրուն դժոխոց (Ես. ԼԸ 10-14)
8. Օրհմեցէ՛ք զԱստուած յօրհմութիւն նոր, զի իշխանութիւն Նորա ի բարձուն փառա-

⁶ Ստեփանոս Օրբելիան, Պարմութիւն նախանդին Սիսական, Տիլիս, 1910, էջ 138-139:

⁷ Տես Մաշտոցի անվ. Մաքենադարան, ձեռ. 3276, էջ 86ա:

⁸ Այդ մասին ավելի մանրամասն գի՞ն Շարական, հ. Ա, Երևան, 1997, Ա. Արևշապյան, Լ. Դակորյան, Առաջարան, էջ XIII-XIX:

տրի (Ես. ԽԲ 10-13)

9. Ի հեզութեան իմում ես առ Տէր կարդայի, եւ լուաւ Աստուած յանդնդոյ դժոխց աղա-
դակի իմում (Յովա. Բ, Իթ)

10. Տէ՛ր, զլուր Քո լուայ և երկեայ. Տէ՛ր, հայեցայ ի գործ Քո և զարհութեցայ (Ամբ. ԳԶ):

Ի աչքես տեսնում ենք, սրաճը 10-ական մասերից բաղկացած 8 խոշոր շարքեր են, որ
նախատեսված են 8 եղանակներով երգելու համար: Բնորոշ է այստեղ «խիստ ոճի» Ութ-
ձայնին հետևելու սկզբունքը (չորս բուն և չորս կողմ եղանակ՝ առանց դարձվածքների և
ստեղիների), ինչը հաղորդում է նրան լուրահատուկ փոքրածավալ առանձին հավաքա-
ծուի նշանակություն (համեմատելի հունական «Օկտաղօք» երգչական գրքի հետ), որտեղ
փաստուեն հաստատվում է Ութձայնի գաղափարը: Սրա հիման վրա բյուրեղացավ Ծա-
րակնոցի կանոնի հայկական տարատեսակը, որն ընդգրկում է 8-9 երգ⁹:

Ավագ օրինություններում ակնհայտ է նաև պոետիկայի ոլորտում արխաիկ կցուրդների
համեմատությամբ տեղի ունեցած առաջընթացը: Այստեղ արդեն խոսք չկա քրիստոնեա-
կան կրոնի զյանակոր դավանաբանական դրույթների թեզիսային, հանրամատչելի շարա-
դարձնելի մասին: Չարականագիրը ցուցաբերում է բարձր մակարդակի համապարփակ,
ասոցիատիվ աստվածաբանական մտածողություն, ամբողջ սրբազն պատմությունը հա-
մակարգելու, ի մի բերելու ձգուում: Վերջինս այստեղ ներկայացված է իբրև խորհրդանշա-
կան փոխադարձ կապերով ու զուգահեռներով հագեցված ինքնամփոփ, կայուն ամբողջու-
թյուն:

Ստեփանոս Սյունեցու հետո ասոցիատիվ բանաստեղծական ոճը լայն ու բազմակող-
մանի զարգացում է ստանում հետազա դարերի հետինակների մոտ՝ իր գագաթնակետին
հասնելով XII-XIII դր. շարականագիրների ստեղծագործություններուն¹⁰:

Իսկ ի՞նչ աղբյուրների վրա է հիմնվել Նիկ. Թահմիզյանը երկու համանուն երաժիշտ-
ների վարկածն առաջ քաշելիս: Նախնառաջ՝ Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ
առկա հիշատակությունների վրա, որտեղ Ստեփանոս Սյունեցու անունը հանդիպում է
երիցս, այսպես.

ա) «Որոց վարդապետը և ուսուցիչը՝ Սուլքն Սահակ և Մեսրոպ, և զյանաւորք յաշակեր-
տացն՝ Սուլքն Յովսէփ, և Յովհան, և Ղետնա, և Սահակ, և Մովսէս Քերտողահայը, և
Մամբրէ Վերծանող, Առուն Եղբայր, Եզնակ և Կորիւմ, Սուլքն Եղիշէ, Դաւիթ Վիհիլիսո-
փայ և Յովհաննէս, տէր Արքահամ, Արձան, Մուշէ, Արձան, Խոսրով, Ղազար, և յեսոյ
Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս...» (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխ.
Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 28):

բ) «Եւ յետոյ մեծն Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս, բազում մնկութիւնս զրոց սրբոց
երող՝ աւետարամացն համառու, և Յորայ, և Դամիկէի, և Եզեկիլէի, և զյանասիամիս
թղթոյն Գերմանոսի պատրիարքի Կոստանդնուպոլսի (Յովն տեղում, էջ 29):

գ) «Յայսմ ժամանակի և թուականի հայոց ՄԻԲ էր Ստեփանոս դրան երեց, որ բանի-
րուն ճանաչիլ, եթաս ի կատարումն ամենայն իմաստասիրական և գրամարտիկոս արուես-

⁹ Նոյն գլուխում, էջ XIX, գլուխ ծանրթագրությունը: Տես նաև A. S. Arevšatyan, Deux textes arméniens attribués à Basile de Césarée sur l'Interprétation des modes musicaux, "Revue des Etudes Arménienes", 26, 1996-1997:

¹⁰ Տես Շարական, Առաջարան, էջ XIX:

տից՝ համերձ հոգևորական առաջինութեամբ: Ենթադրությունը աշխարհիս Հայոց ընտրեալք և լուսաւորք՝ տէր Եփիրս և Անաստաս և Խաչիկ և Դաւիթ Հռոմայրեցի, և մեծն իմաստաւոր Ստեփանոս Սիմեոնի, աշակերտ Մովսիսի, զոր ի վերագոյնն իշխատակեցաք, որ թարգմանիչ եղան ի յունականէն ի հայ լեզու, և ի վերալ թարգմանութեանն արար և երգս հոգևոր քաղցր եղանակալու՝ շարականն և կցուրդս և այլ եղան արար և մեկնութիւն համառօտ՝ անտորամացն, և քերականին, և Յորայ, և «Տէր, եթէ շրջանցն զիշերոյ» (Առվան տեղում, էջ 72):

Անզեն աշքով էլ կարելի է մկատել, որ առաջին իսկ պարբերության մեջ, որ բերված է Ստեփանոս Սյունեցու ամուսնը, իմաստամանություն և հակասություն կա:

Հետոագա խառնաշփոթի պատճառը, մեր կարծիքով, «... և յետոյ Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոս» արտահայտությունն է, որը հետևում է Սուրբ Սահմանի և Մերորայի աշակերտ Անրի փայլուն փաղանգի թվարկումից հետո: Գուցե պատմիչը այդպիսով ցանկացել է ընդգծել իր վերաբերությունը ու գնահատականը Ստեփանոս Սյունեցու հանդեպ, մատնանշել նրան որպես ոսկեդարյան մշակութային ավանդույթների ամիշխական և արժանի մետորդ, հեղլենական դպրության կրող և համբարձիտակ մտավորականի տիպար, որի գրչի արգասիքն էին Ավետարանի համառոտ մեկնությունն, ինչպես նաև Հորի, Դամիելի և Եգեկիելի գրքերի մեկնությունները, Գերմանոս պատրիարքի թոյթի պատասխանը, Նեմեսիոսի և Գրիգոր Նյուտոնի հայտնի երկասիրությունների թարգմանությունները և Մեկնութիւն քերականին ձեռնարկը¹¹: Հենց այդ «և յետոյ Ստեփանոս Սիմեոնի եպիսկոպոս...» արտահայտությունը հիմք է ծառայել Սոյ. Սյունեցի Ս.-ի վարկածը առաջ քաշելու համար, իմայ բացահայտ հակասություն է պատմական իրողության հետ:

Մյուս աղբյուրը՝ հայ միջնադարյան մատենագրության մեջ հայտնի շարականագիրների ցուցակներն են, որոնցից հնագույնն է Վաճական վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» ձեռնարկում զետեղված ցուցակը¹²:

Հայ միջնադարյան մատենագրության մեջ հայտնի են տարբեր հետիմակների կողմից ստեղծված շարականագիրների մի շարք ցուցակները¹³, որոնցից հնագույնն է Վաճական վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» ձեռնարկում զետեղված ցուցակը¹⁴:

¹¹ Տի՛ն Աս. Մելացականյան, Ստեփանոս Սյունեցու նորահայր գրականության մեջ հայտնի են տարբեր հետիմակների կողմից ստեղծված շարականագիրների մի շարք ցուցակները, որոնցից հնագույնն է Վաճական վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» ձեռնարկում զետեղված ցուցակը:

¹² Տի՛ն նաև նոյն հարցին նվիրված ուշագրավ և համամանալից հետիւյալ հողվածը. Լ. Գ. Սարգսյան, Կարձնեցյալ Ստեփանոս Սյունեցի շարականագիր, «ԼՀԳ», 1993, N 1, էջ 120-129:

¹³ Տի՛ն Ռ. Անապյան, Հայկական մագիստրակություն, հ. Ա. Երևան, 1959, էջ LXI-LXXIV:

¹⁴ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Ա. Ցակոնքանց վանքի, հ. Դ, աշխ. Նորայր և պատասխան, Երևան:

Նմանատիպ ցուցակների հեղինակներ են Սարգս Երեցը, Գրիգոր Տաթևացին, Ազանուրի¹⁵: Շարականագիրներին նվիրված չափածո երկեր են ստեղծել Առաքել Սյունեցին, Ստեփանոս Զիգ Զուղայեցին, Հակոբ Սաեցին¹⁶: Ուշադիր հետևենք նշված հեղինակների հաղորդած տեղեկություններին: Դրանց ճնշող մեծամասնությունը Ավագ օրինությունների հորինումը ընծայում է Ստեփանոս Սյունեցուն: Այն համգամաճը, որ նրանք մկանի ունեն VII-VIII դր. ապրած մատենագիր եպիսկոպոսին, հետևում է նաև հեղինակների որդեգրած ժամանակագրական կարգից, որի համաձայն հիշատակվում են հայ հոգևոր երգարվեստի երախտավորները՝ սկսած Մաշտոցից և Սահմակից մինչև Կիրակոս Երգմկացի: Մեջբերնենք խնդրո առարկա հեղինակին վերաբերող մասերը միայն:

Վաճական վարդապետ. «ԶՅԱՐԴՈՒԹԵԱՆ ԱԼԻԲԱՆՈՒԹԵԱՆ Է ՃԱՅԱՆ՝ ՍՏԵՓԱՆՈՆ ՍԻՒՆԵՑԻՆ, ԵՒ ՊՎԱՈՆ ՆԵՐԱԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՆ»¹⁷:

Սարգս Երեց. «ԶՅԱՐԴՈՒԹԵԱՆ ԱԼԻԲԱՆՈՒԹԵԱՆ ԳԵՎԱՐԵՆ ՃԱՅԱՆԻՆ, . զՅՈՐՈՒԹԻՒՆ ԱՐՔՈԾՈՒՅՈՒՆ ՍՏԵՓԱՆՈՆ ՍԻՒՆԵՑԻՆ ԱԱՎ»¹⁸:

Գրիգոր Տաթևացի. «ԶԱՎԱԳ ՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՔԵ ՃԱՅԱՆԻՆ ՍՏԵՓԱՆՈՆ ՍԻՒՆԵՑԻՆ»¹⁹:

Առաքել Սյունեցի. «ՅԱՅԼԵՆ ԲԱԽԱՆ ԵՐԱՅԱԼԻԱՌ ՏԵՐ ՍՏԵՓԱՆՈՆ ՍԻՒՆԵՑԻՆ»²⁰:

Ստեփանոս Զիգ Զուղայեցի. «ԵՒ ԳՈՐԻՆՈՒԹԻՒՆ ՈՐ ՄԵՏ ԿՈՀԻՄ ՍՈՒՐԵ ՍՏԵՓԱՆՈՆ ՍԻՒՆԵՑԻՆ»²¹:

Ցակոր Սաեցի. «ԷՐԵՑ ՅՈՒԱՆ (Հովհ. Վաճական) ԱՅՍԱԷՆ ԻՄԱՅ՝

ԱԼԱԳ ՕՐԻՆՈՒԹԵԱՆԵՐՆ ՈՐ ԿԱՅ,

ԶԱՅԱՆ ԵԿԵՑՆ ՍԻՒՆԵԱԳ ՍՏԵՓԱՆՈՆՍԱԳ,

ՍՈՒՐ ԹԷ ՄԵՆԱԳ ԱՇԽԱՆ ՀԸԿԱՅ»²²:

Անանուն խմբագրություն, Ժ.Ը.-Ժ.Թ դր. «ՍՏԵՓԱՆՈՆ ՍԻՒՆԵՑԻ ԱՊՈԽՀԱՆ, ՈՐ յԱՉԱԿԵՐ-
ՏՈԳ ԱԲՈՒ ՍԵՐՈՒ ԹՎԱՐԳՄԱՆՉԱԳ, ԳԵԿԵՑՆ ՃԱՅԱՆ ԱԼԱԳ ՕՐԻՆՈՒԹԵԱՆԳ»²³:

Ահա այս մեջբերումների ցուցակն ամփոփող Անանունի հաղորդած տեղեկությունն է Թահմիզյանի աղբյուրը: Ի՞նչ կարևոր եղանակումների է հասել Թահմիզյանը: Նա վերաբեր է Ստեփանոս Սյունեցու (Երկրորդի) ողջ վաստակը, այն է՝ Հարության Ավագ օրինությունների ստեղծումը՝ 80 երգ (!) Ստեփանոս Սյունեցի Ա.-ին: Հայտնի է, որ Ավագ օրինությունների ստեղծումը ազդարարում էր բյուզանդական հիմներզական կամոնի՝ որպես VIII դ. առաջատար հիմներզական երածշտաբանաստեղծական տեսակի մուտքը հայ շարականերություն: Տվյալ տեսակը ձևավորվել է VIII դարից ոչ շուտ, Անդրեաս Կրետացու և ապա՝ Կողման Մայունացու և Հովհաննես Դամակացու ստեղծագրության մեջ: Բնա-

ՊԼ. 1965, լ. 485:

¹⁵ Անասյան, նշվ. աշխ., լ. Հ ԼԽՎ-ԼԽԻ:

¹⁶ Նոյն գլուխ, լ. Հ ԼԽԻ-ԼԽՎ:

¹⁷ Մայր ցուցակ հայերին ձևագրաց Ս. Յակոբինաց վանքի, լ. Հ 485:

¹⁸ Անասյան, նշվ. աշխ., լ. Հ ԼԽԻ:

¹⁹ Նոյն գլուխ, լ. Հ ԼԽՎ:

²⁰ Նոյն գլուխ, լ. Հ ԼԽԻ:

²¹ Նոյն գլուխ, լ. Հ ԼԽՎ:

²² Նոյն գլուխ, լ. Հ ԼԽՎ:

²³ Նոյն գլուխ, լ. Հ ԼԽՎ:

կան է, որ զիտելիքները կատարելագործելու և ընդլայմելու նպատակով Կոստանդնուպոլիս Մեկնած՝ Ստեփանոս Սյունեցին, հաղորդակից դառնալով բյուզանդական եկեղեցական երգաստեղության ճորագով ճեղքերության հայկական հիմներգական կանոնը ստեղծելիս որպես շափանուշ օրինակ նկատի է ունեցել Բենց Անդրեաս Կրետացու 10 երգից բաղկացած շարքը: Այսինքն՝ նույնիսկ զուտ մշակութաբանական կտրվածքով, կանոնը որպես երևույթ գոյություն չի ունեցել V դարում²⁴:

Դրա հետևանքով խեղայուրով է իրական Ստեփանոս Սյունեցու երաժշտագիտական վաստակի խնդիրը: Թարմիզյանը նրան վերապահել է բավական համեստ մի դերակատարում՝ արդեն շրջանառության մեջ եղած շարականների վերակարգավորումը ըստ Ուշմայմի (այդպես է նաև մեկնաբանում Ստ. Օրբելյանի «Կարգեաց շարեաց» արտահայտությունը), որոնք ի մի էին բերված, հավանաբար, Բարսեղ Շոնի «Ծննդատիր» երգարանում և «Մեկնութիւն քերականին» երկասիրության միջի երաժշտությանը վերաբերող ասույթները: Նորարար բեղուն ստեղծագործողի, բարենորոգչի դերն ամբողջությամբ ընծայվել է V դ. հնարադրյալ Ստեփանոս Սյունեցուն²⁵:

Սակայն, ուշադրի քննելով Անանուն խմբագրությունը, կարելի է եզրակացնել, որ Ստեփանոս Սյունեցի Առաջին և Երկրորդ Աշեղով՝ ցուցակի հեղինակը, բացի VIII դ. Ստեփանոս Սյունեցուց, Ակատի է ունեցել մյուս հիշատակվող շարականագիր Ստեփանոսին, Մոնկացի կամ Ապարանցի նպիսկոպոսին, որն ապրել է X դ., և որի հեղինակած «Սրբութիւն սրբոց» անվանական ծայրակապով 983 թ. հորինված շարականը՝ Բյուզանդիայի Վասիլ Կայսրի Ավիրաբերած մի քանի Աշանավոր սրբությունների և Ապարանցի խաչի կապակցությամբ, շարականագիրների ցուցակի որոշ հեղինակների կողմից վերագրվել է Ստեփանոս Սյունեցուն՝ դարձնելով նրան Ավագ օրինությունների և «Սրբութիւն սրբոց» շարականի հեղինակ (Սարգիս Երեց), կամ «Ստեփանոս Սիւնեցի Երկրորդն՝ զՍրբութիւն սրբոց Խաչին, զոր ոմանք Ստեփաննոսի Մոլաց եպիսկոպոսի տան, որ Ապարանցի ևս կոչչ»²⁶ (Անանուն խմբագրություն): Սակայն որոշ հայագետներ հստակորեն զանազանել են այդ երկու շարականագիրների հեղինակությունը, ինչպես, օրինակ, հ. Ղ. Ալիշանը, որը Աշեղ է. «Սիւնեցի և Մոնկացի Ստեփանոսնեաց»²⁷:

Այդ դեպքում, իրոք, ունենք Ստեփանոս անունով երկու հաշանավոր շարականագիր, բայց ոչ Սյունեցի մականունով: Պարզվում է, որ Անանուն խմբագրության երկու Ստեփանոս շարականագիրների մասին վկայող հատվածները Թարմիզյանի կողմից սխալ են մեկնաբանվել, հավանաբար նաև Մ. Չամչյանի կարծիքի ազդեցության մեջքո, որի համաձայն «Աւագ Օրինութիւնները կրնամ գրուած ըլլալ Ե. դարու Ստեփանոս Սիւնեցին, և կանոնի վերածուած՝ Հ. դարու Ստ. Սիւնեցին»²⁸: Իրականուն խոսքն այստեղ ոչ թե V և VIII դդ. հեղինակների մասին է, այլ VIII և X դդ., այսինքն՝ Ստեփանոս Սյունեցի եպիսկո-

²⁴ Այդ մասին մանրամասն փեն Շարական, հ. Ա, Առաջարան, էջ XIII-XV, XVII-XIX:

²⁵ Տես նաև նոյն խնդրին նվիրված ուշագրան ու ծավալուն հետիւյա հողվածը՝ Լ. Գ. Սարգսյան, Կարծեցյալ Սրբականու Սյունեցի շարականագիր V դարի, «ԾԳ», 1993, N 1, էջ 120-129:

²⁶ Տես Հ. Անասյան, Եշվ. աշխ., էջ LVIII:

²⁷ Տես Ն. Ալիշան, Ընորհապի և պարապայ իր, Վենեգիկ, 1873, էջ 82:

²⁸ Տես Մ. Չամչյան, Հայոց պարմութիւն, հ. Ա, Կ. Պոլիս, 1784, էջ 782:

պոսի և Ստեփանոս Սպարանցու՝ Մոկաց եպիսկոպոսի մասին: Արա սրանք են, մեր կարծիքով, «Ստեփանոս Սյունեցի Առաջին» և «Ստեփանոս Սյունեցի Երկրորդ» շարականագիրների ներքո հասկացվող հեղինակները:

Հաս Ղազար Զամկեցի վարդապետի վկայության, Ստեփանոս Սյունեցին «երգեաց զերզո շարականաց քաղցր եւ գեղեցիկ եղանակաւ եւ մեծ խորհրդով: ԶՇԱՆԴԵԱՆ ՔՐԻՍ-
ՏՈՒՍԻ, եւ զՄԿՐՈՒՊԵԱՆ, եւ ԵԿԱՅՈՐՈՒԹԵԱՆ ի ԲԵՔԹԱՆԻԱ եւ ԽԵՐՈՍԱՊԵԿՄ, եւ զՄԵԾԻ շաբա-
րու զՉԱՐԺԱՐԱՄԱԳԸ, եւ զՅԱՐՈՒԹԵԱՆ, եւ զՀԱՄԲԱՐՃԱՆԱՆ, եւ զՀՈԳԻՆ Սրբոյ Գալլս-
տեան, եւ զԵԿԵԼԵԿԵՐՈՅ, եւ զԱՎԱԳ ՕՐԻՆՈՒԹԵԱՆ կարգք, բաց ի Վառէն, եւ այլ տօնից տէրու-
մականաց եւ սրբոց բազմաց, զոր մինչեւ ցայսօր պաշտի ԵԿԵԼԵԿԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ»²⁹:
Հաս Էռուժան, Ղազար Զամկեցին, բաշ զիտակցելով Ստեփանոս Սյունեցու դերը Շարակ-
նցի կարգավորման գործում, թվարկում է այն կանոնները, որոնք խմբագրել և հեղինակել
է (մասնավորապես՝ Ավագ Օրինությունները) Ստեփանոս Սյունեցին:

Հ. Գ. Ավետիքյանը «Բացատրութիւն շարականաց» մեծածավալ աշխատության մեջ,
անդրադարձական իմադրության առարկա հարցին, գրել է. «Յօրինող Աւագ Օրինութեանցու ասի
Ստեփանոս Սիւնեցի, որ եկաց ի վերջ եօթմերորդ դարուն, բաց ի Վառ ճայնէն՝ զոր ասէն
արարեալ Ներսէսի Ծնորհալույն. ըստ որում յիշէ զայս հետինս Կիրակոս պատմից: Բայց
ըստ այս թերևս տարակոյս արկանիցէ այն, զի ի Մազկիստրոսի թուույս բերի բան երկրորդ
տան իմաներորդ շարականին. «Որ յաթոսս քերովբէական բազմեցաւ ընդ Հօր», թեպետ նա
ոչ իբրև բան շարականի բերէ զայս»³⁰:

Հ. Ղ. Ալիշանը բազմիցս անդրադարձել է Ստեփանոս Սյունեցու երաժշտական վաս-
տակին. «... Աւագ Օրինութիւնը բաւական էին ոչ միայն նմա միավոնու ի փառս, եթէ և չեր
այլ ինչ մնացեալ յերկոց նորին, այլ և համօրէն ազգի նորին՝ եթէ շնչեալ բարձեալ էր բնաւ
այլ դպրութիւն ստրա (...): գորիար, որ արդ և ի միջի դպրութեան մերոյ, մանաւանդ ի շարս
սրբազն երգոց, գերազանցօրէն փայլէ և փայլեսցէ մինչեւ երգարաննեալն ի նմանէն, Յա-
րուցեալ ի մեռելոց՝ յարուցտ զննչեցեապսն յուսով՝ յանմահութիւն»³¹: Իսկ «Ծնորհալի եւ
պարագայ իր» աշխատության մեջ այսպես է բնորոշել երգարաննեալն: «Ը դարուն սկիզբը
Ստեփանոս Սիւնեցին՝ իր զերազանց շարականօրն»³²:

Ի դեպ, Ստեփանոս Սյունեցի Ա-ի մասին չի հիշատակում ամենավաստանիկ հեղինակ-
ներից նաև Մաղաքիա արքեպոս. Օրմանյանը: Նրան հայտնի է ընդամենը մեկ՝ 735 թ. Աս-
հատակված Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը³³:

Գ.ԸՆ. Ծ. Վլորդ Գալեմբյարյանը ևս Ավագ Օրինությունները վերագրում է Ստեփանոս
Սյունեցուն, որին և համարում է Օրինության շարականի Հայ Եկեղեցու երգեցողության
մեջ ներմուծած առաջին հեղինակը³⁴:

²⁹ Ղազար Զամկեցի, Գիրք որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1764, լ. 625:

³⁰ Տե՛ս, Բացագրութիւն շարականաց, Վենեսպիկ, 1814, լ. 672:

³¹ Տե՛ս Ղ Ալիշան, Միսական, Վենեսպիկ, 1890, լ. 128:

³² Տե՛ս Ղ Ալիշան, Ծնորհալի եւ պարագայ իր, Վենեսպիկ, 1873, լ. 89:

³³ Տե՛ս Մաղաքիա արքեպոս. Օրմաննան, Ազգապատում, հ. Ա, պրակ Բ, Բնյութ, 1912, լ. 862-864:

³⁴ Տե՛ս «Տաճար», 1910, լ. 654-656:

Մ. Արենյանը, ուսումնասիրելով Հարության Օրինությունների հետինակի հարցը³⁵ և հատկապես հիմնվելով Ստ. Օքելյանի աշխատ վկայության վրա, հաճգել է այն եզրակացության, թե Ստեփանոս Սյունեցին «մեքենայորեն կարգել, շարել է տասը մարդարեական օրինությունների կցուրդներն իբրև Հարության Օրինություններ»³⁶: Ըստ այդի, Ստեփանոս Սյունեցին մարդարեական օրինությունների կցուրդները շարել է որպես Հարության Օրինություններ և գրանց կցելով մասնավոր Հարց (իր գործատունով), Մեծացուացէ, Ողորմեա, Տէր Յերկանից, Շաշու և Համբարձի շարականներ՝ կազմել է Ավագ Օրինության կարգը կամ կանոնը: Ստեփանոս Սյունեցին, մտցնելով կանոնը, կարող էր ուրիշ կանոնների շարականներ ևս կարգել: «Կարգեաց շարեաց շարական», բայց այդ չգիտեմք»³⁷:

Թերևս Արենյանի ենթադրությունն ամենիմ չէ, սակայն անհավանական է թվում, որ մարդարեական օրինություններին, դատելով բազմաթիվ ձեռագիր ժամագրքերում պահպանված դրանց խազագրությունից, որոնք վկայում են տվյալ երգասացությունների ծորեղային-զարդողորում (մեջիզմատիկ) մեղեղիական մկարագիրը, կցուրդներ ավելացնելու անհրաժեշտություն առաջանար: Այդ է հուշում ժամասացության երաժշտական ձևավորման տարրական տրամաբանությունը: Անկասկած, Ավագ Օրինություններն ինքնուրույն և հասուկ նպատակով հրոհնակած երգեր էին:

Չափ ճիշտ է ձևակերպել իրողությունը Հ. Անայանը իր «Հայոց անձնանունների բառարանում՝ գրելով «Ստեփանոս Ս. Սիւնեցի եպիսկոպոս Սիւնեաց. Դուինի աւագերեցի որդին. աշակերտ Մովսէս Սիւնեցու»³⁸:

Մեր օրերու Մեսրոպ Վրդ. Գրիգորյանը (այժմ արքեպիսկոպոս) իր «Ստեփանոս Սյունեցի» աշխատության մեջ գրում է ինտևյալը. «Ստ. Սիւնեցին կենսագիրները, ինչպէս և տպագիր ու ձեռագիր շարականցներու սկիզբը զետեղուած շարականագիրներու ցուցակները, կը վկայեն թէ իր ինտեղնակութիւնն են Քրիստոսի յարութեան յիշատակին նույիրուած Աւագ Օրինութիւնները»³⁹: Սակայն, մեջքերելով հայտնի հայագետների տեսակետները խնդրու առարկա հարցի վերաբերյալ, Մ. Գրիգորյանը ի վերջո հակվում է Մ. Զամյանի ոչ ճիշտ տեսակետին:

Նշենք, որ Ստեփանոս Սյունեցուն որպես VIII դ. շարականագիր և տեսարան են համարում նաև մեծանուն երաժշտագետներ Ե. Տնտեպանը⁴⁰, պրոֆ. Ք. Քուչարյանը⁴¹ և պրոֆ. Ռ. Աթայանը⁴²:

Թերևս մեր տեսակետոր հասուակ դարձավ ընթերցողին, թեպես Ստեփանոս Սյունեցու ստեղծագործական ժառանգության մետ կապված դեռ իրենց վերջնական լուծումը

³⁵ Տե՛ս Մ. Արենյան, Շարականների մասին, «Արարավ», 1912, լզ 484-488:

³⁶ Տե՛ս «Արարավ», լզ 833-834:

³⁷ Տե՛ս Պատմություն հայ հին գրականության, հ. Ա, Երևան, 1944, լզ 486:

³⁸ Տե՛ս Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1943, լզ 605:

³⁹ Մեսրոպ Վրդ. Գրիգորեան, Ստեփանոս Սիւնեցի, Թեյրութ, 1958, լզ 40-41:

⁴⁰ Տե՛ս Ե. Տնտեպան, Նկարագիր երգոց Հայասպաննեաց Ս. Եկնեսույց և յանուած բովանդակութիւն երգոց ըստ ութիւն ճայմից, Բ. Վազգը, Խորանպոլ, 1933, լզ 136:

⁴¹ Խ. Ս. Կանարես, Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, стр. 115.

⁴² Ռ. Ա. Աթայան, Հայկական խազային նորագություն, Երևան, 1959, լզ 73-74:

չատացած բազում հարցեր կան, սակայն դրամք սովոր հոդվածի նպատակից դուրս են՝ պահանջելով առանձին ուսումնասիրություն։ Այսպես, օրինակ, ընթերցողը հավանաբար Ակատեգ, որ դեռևս միշտադարյան մատենագիրներն ամենուրեք ճշել են, թե Ստեփանոս Սյունեցին հեղինակել է միայն յոթ ձայնեղանակների Ավագ Օրինությունները, իսկ Վառ ձայնին, այսինքն՝ Գ կողմին պատկանող շարականները հորինել է Ներսես Շնորհալին։ Վառ ձայնի Ավագ Օրինությունների ուսումնասիրության հարցով հատուկ գրադպել է երաժշտագետ Լ. Հակոբյանը, որը տվյալ շարականների տաղաչափության քննության հիման վրա համոզեցուցիչ կերպով ապացուցել է, որ Վերջիններս, իրոք, տարբերվում են իրենց տաղաչափական և բովանդակային առանձնահատկություններով և ստեղծվել են ավելի ուշ շրջանում⁴³։

⁴³ L. Hakobyan, The Versification of the Šarakan-hymns, "REArm", 24, 1993, pp. 118-119): Գուցն հենց այլ համապատասխան մեջ Անդրանիկ Մանուկյան համապատասխան հեղինակ՝ գրելով «Ստեփանոս Սյունեցի ատացինն», որ յաշակերպաց անդի Սրբոց Թարգմանչաց՝ ցանկանալով Խեն, որ Ավագ Օրինությունները կնրգնիս Ստ. Այունցին հավաքարիմ է մասեկ Սուրբ Թարգմանիչների առաջին խստաշուչ և վսնմ կցորդների ընդհանուր ողուն և ոճին՝ յուրովի հարստացնելով կցորդի ժանրը, այդպիսով դառնալով ոսկեարյան շարականագիրների թողած ավանդույթների արժանի շարունակողը։